

# Պլաստմասսան գյուղատնտեսությունում

## Ի՞նչ է պլաստմասսան

- ◆ Պլաստմասսաները տեխնաձին նյութեր են, որոնք ստացվում են նավթաքիմիական նյութերի մշակմամբ:
- ◆ Դրանք բաղկացած են ցանկացած լայն սպեկտրի սինթետիկ կամ կիսասինթետիկ օրգանական միացություններից, որոնք ճկուն են և, հետևաբար, կարող են ձևավորվել որպես կոշտ ապրանքներ:

## Պլաստմասսայի տեսակները

- ◆ Ջերմապլաստիկ նյութերը, օրինակ՝ ակրիլը, նեյլոնը, կարող են կրկին տաքացվել և կադապարվել:
- ◆ Ջերմառեակտիվ պլաստմասսան, օրինակ՝ մելամինը, պոլիմեր է, որը կարծրանալուց հետո հնարավոր չէ կրկին տաքացնել և հալեցնել՝ այլ տեսք տալու համար, ի տարբերություն ջերմապլաստիկ նյութերի:
- ◆ Կենսապլաստմասսան ստացվում է բնական նյութերից, օրինակ, եգիպտացորենի օսլայից:
- ◆ Վերամշակված պլաստմասսան ստացվում է պլաստմասսե իրերի վերամշակումից: Այսպիսի պլաստմասսան էժան է:



## Պլաստմասսայի հետ կապված խնդիրները



- ◆ Պլաստմասսաները դարեր շարունակ Ֆսում են շրջակա միջավայրում՝ սպառնալով վայրի բնությանը և տարածելով թունունակ նյութեր:
- ◆ Դրանք դժվար է օգտահանել:
- ◆ Ժամանակ առ ժամանակ փաթեթվածքի միջոցով մեր օրգանիզմ է մտնում աղտոտված սնունդ:
- ◆ Միկրոպլաստմասսաները մեր օրգանիզմ են մտնում սննդի միջոցով:
- ◆ Աղբավայրերը նպաստավոր միջավայր են ստեղծում հողի մեջ աղտոտող նյութերի ներթափանցման համար, ինչը հանգեցնում է հողի, ջրի և օդի աղտոտվածության:

- ◆ Կենդանիները սպանվում են՝ դրանք կուլ տալու պատճառով:
- ◆ Պլաստմասսաները մեծ վնաս են հասցնում բուսականությանը:
- ◆ Խցանում են ջրթող խողովակները և կոյուղագծերը:
- ◆ Դրանց այրման հետևանքով մթնոլորտային օդ են արտանետվում թունունակ

քիմիական նյութեր:

- ◆ Հողում պլաստմասսաների խորը ներթափանցումը խաթարում է ներքին շերտերը՝ մեծացնելով ճնշումը:

## Պլաստմասսայի օգտագործումը գյուղատնտեսությունում

*Պլաստմասսե արտադրանքների օգտագործման գործելակերպի հիմնական առավելություններից են՝*

- ◆ մշակաբույսերի բերքատվության բարձրացումը,
- ◆ ջրի սպառման և բույսերի պաշտպանության միջոցների, օրինակ, ագրոքիմիկատների ու պարարտանյութերի, մոտ 30-40%-ով կրճատումը,
- ◆ գյուղատնտեսական նպատակներով պլաստմասսե արտադրանքների օգտագործման գործելակերպի հեշտությամբ ներդրումը գյուղատնտեսության վարման համակարգում:



## Գյուղատնտեսությունում պլաստմասսան օգտագործվում է տարբեր ձևերով.

- ◆ Հսկա գլանափաթեթների միջոցով պլաստմասսե թաղանթները փռում են դաշտերի վրա:
- ◆ Պլաստմասսե թաղանթները մեկուսացնում են արմատները և կանխում մոլախոտերի աճը:
- ◆ Չափավորում են հողի ջերմաստիճանն՝ այդպիսով նպաստելով բերքատվության բարձրացմանը:
- ◆ Նվազագույնի են հասցնում ջրի սպառումը:
- ◆ Կրճատում են թունաքիմիկատների օգտագործումը:
- ◆ Բարելավում են որոշակի ծաղիկների արտադրությունը:
- ◆ Օգտագործվում են անձրևաջրերի կուտակման համար:
- ◆ Օգտագործվում են արհեստական լճակների ջրամեկուսիչ թաղանթների, ջերմոցների ծածկերի, միկրոռոտզման ջրցանիչների տեսքով:

## Պլաստմասսե ցանքաձածկեր

Պլաստմասսե ցանքաձածկ թաղանթներն օգտագործվում են ցանքաձածկի պես՝ մոլախոտերի աճը ճնշելու և բուսաբուծության ու կանաչապատման ոլորտում ջրի սպառումը նվազեցնելու համար:

Ահագանգող է այն, որ պլաստմասսայի շատ տեսակներ ընդհանրապես չեն օգտահանվում: Լավ օրինակ են ցանքաձածկ թաղանթները, որոնք ֆերմերները սովորաբար օգտագործում են հողը ծածկելու համար, որպեսզի կարգավորեն հողի ջերմաստիճանը, պահպանեն խոնավությունը և

Ճնշեն մոլախոտերի աճը: Բերքահավաքից հետո այս թաղանթների հեռացումն այնքան էլ հեշտ չի լինում, որի պատճառով հաճախ հողում մնում են դրանց մնացորդները, որոնք հանգեցնում են էրոզիայի, ջրի ներթափանցման կրճատման և մանրէների ակտիվության նվազման:




Հեռացված պլաստմասսաները հակված են քայքայվելու ավելի փոքր մասնիկների, որոնք հայտնի են որպես միկրոպլաստմասսաներ:

Դրանք կարող են կուտակվել հողում և փասսել օգտակար օրգանիզմներին, ինչպիսիք են անձրևատրոներն ու միկորիզային սնկերը, որոնք անհրաժեշտ են հողերի առողջության և բույսերի աճի համար: Դրանք կարող են նաև փոխանցվել և կուտակվել սննդի շղթաներում՝ սպառնալով սննդամթերքի անվտանգությանը, պարենային անվտանգությանը և, ի վերջո, մարդու առողջությանը:

### **Գյուղատնտեսական նպատակներով պլաստմասսայի օգտագործման գործելակերպի հետ կապված խնդիրները**

- ◆ Պլաստմասսե թաղանթների մնացորդները ժամանակի ընթացքում նվազեցնում են հողի ծակոտկենությունը, օդի շրջանառությունը և հողի բերրիությունը:
- ◆ Դրանք արտազատում են թունունակ նյութեր, որոնք կարող են կլանվել բանջարաբոստանային մշակաբույսերի կողմից և առաջացնել առողջապահական ռիսկեր:
- ◆ Դրանցում կարող են կուտակվել մշակաբույսերի փասսատուների դեմ կիրառված թունունակ նյութերը, որոնք փասսակար են կենդանիների համար:
- ◆ Դրանք խաթարում են մանրէաբանական համայնքները:
- ◆ Դրանք դժվար է վերականգնել և կրկնօգտագործել:

### **Միկրոպլաստմասսա**



Միկրոպլաստմասսան ոչ թե պլաստմասսայի հատուկ տեսակ է, այլ ցանկացած տեսակի պլաստմասսայի մնացորդ, որի երկարությունը 5 մմ-ից պակաս է:

Պլաստմասսայի այդ փոքր մասնիկները կարող են թափանցել շրջակա միջավայրի բոլոր անկյունները՝ հողի, ջրի, օդի մեջ և, ի վերջո, մարդու օրգանիզմ: Հետազոտությունները ցույց են տալիս, որ միկրոպլաստմասսաները քայքայվում

են ավելի փոքր, նանո չափի մասնիկների, որոնք կոչվում են «նանոպլաստմասսաներ»: Նման մասնիկների չափերը տատանվում են 1-ից մինչև 1000 նմ:

## Միկրոպլաստմասայի ազդեցությունը

- ◆ Միկրոպլաստմասայով աղտոտված հողն ավելի քիչ բերք է տալիս՝ անձրևաորդերի պակաս արտադրողականության և pH-ի ցածր մակարդակի պատճառով:
- ◆ Այս միտումները շարունակվելու դեպքում, մեր ողջ գյուղատնտեսական համակարգը կարող է վտանգվել:



Սույն տեղեկատվական նյութը ստեղծվել է «Գյուղի կայուն զարգացում» գյուղատնտեսական հիմնադրամի կողմից՝ «Կանաչ դրամաշնորհների» գլոբալ հիմնադրամի (GGF) ֆինանսավորմամբ իրականացվող «Մեկնագամյա օգտագործման պլաստմասե արտադրանքների անվտանգ այլընտրանքները Հայաստանի փոքր ֆերմերային տնտեսություններում» ծրագրի շրջանակում:

«Գյուղի կայուն զարգացում» գյուղատնտեսական հիմնադրամ  
ՀՀ, ք. Երևան, Շինարարների փող. 18, բն. 52  
Էլ. փոստ՝ [info@ruraldaf.am](mailto:info@ruraldaf.am)  
Վեբ կայք՝ <http://www.ruraldaf.am>

ԵՐԵՎԱՆ 2025